«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն
Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219
E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր քարտուղար Կամո Սահակյանին
hetq.am-ի լրագրող Սամսոն Մարտիրոսյանից

(Էլ-փոստ՝info@hetq.am, samsonmartirosyan@gmail.com, հեռ. 098-19-09-16)

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների ու «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տեղեկություններ տրամադրել ստորև ներկայացված հարցերի մասին:

Վայոց Ձորի մարզպետարանը հայցադիմում է ներկայացրել Վարչական դատարան՝ ընդդեմ Արենի խոշորացված համայնքի ավագանու՝ պահանջելով անվավեր ճանաչել համայնքը էկո-տնտեսական տարածք դարձնելու և համայնքի տարածքում մետաղական հանքարդյունաբերությունը արգելելու որոշումը:
Ինչպես գիտենք, Վայոց Ձորի ևս երեք խոշորացված համայնքի՝ Ջերմուկի, Գլաձորի և Եղեգնաձորի ավագանիները նմանատիպ որոշումներ են կայացրել:

Արդյոք Վայոց Ձորի մարզպետարանը պատրաստվու՞մ է այս համայնքների ավագանիների դեմ նույն պահանջով հայցադիմում ներկայացնել դատարան, եթե այո, ապա ե՞րբ: Եթե ոչ, ապա ինչու, քանի որ նմանատիպ որոշումներ են կայացրել ավագանիները:

Տեղեկացված ենք, որ ավելի վաղ դատարանը մերժել էր Վայոց Ձորի մարզպետարանի հայցը ընդդեմ Գլաձորի ավագանու, քանի որ մարզպետարանի դիմումը չէր պարունակում որեւէ հիմնավորում:

Խնդրում ենք տրամադրել նաև մարզպետարանի պաշտոնական դիրքորոշումը ավագանու ընդունած որոշումների վերաբերյալ և ներկայացնել դատարան դիմելու իրավական և մյուս հիմնավորումները:

Հարգանքով՝
Սամսոն Մարտիրոսյան

02 հոկտեմբեր 2019

Հ. Հ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
Մուտքի թիվ 5949
02 10 2019